

«ԵՎՐՈՅՈՒՆԻՍ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒՂԻՏՈՐԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

03.06.2026թ.
N 032617

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս ԵՍ
«Բեքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Քրեավոր տնօրեն
Կառն Գևորգյան

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Եվրոթերմ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Եվրոթերմ» Փակ Բաժնետիրական Ընկերության (հետայսու՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԵՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորի կողմից, որը 2025 թվականի մայիսի 16-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում

Է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ընկերության ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից գերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ նրբին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ,

հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Գրիգոր Սարգսյան



03.06.2026թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Օնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	4,141,988	4,279,201
Ոչ նյութական ակտիվներ	5	14,966	12,909
Բերքատու ծառեր	6	760,311	796,630
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	8	62,105	47,993
		<u>4,979,370</u>	<u>5,136,733</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	9	1,575,875	1,328,617
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	794,607	652,801
Մնացորդներ քանկերում	11	133,565	39,080
		<u>2,504,047</u>	<u>2,020,498</u>
		<u>7,483,417</u>	<u>7,157,231</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	12	525,050	525,050
Վերագնահատման պահուստ	13	1,530,942	1,599,495
Սեփական կապիտալի այլ տարրեր		2,881	2,881
Կուտակված շահույթ		2,767,500	2,315,918
		<u>4,826,373</u>	<u>4,443,344</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	14	1,020,040	1,661,606
Վարձակալության գծով պարտավորություն	15	49,432	42,155
Հետաձգված հարկային պարտավորություններ	7	298,063	374,716
		<u>1,367,535</u>	<u>2,078,477</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	14	894,575	297,232
Վարձակալության գծով պարտավորություն	15	1,993	1190
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	361,320	336,988
Ընթացիկ հարկային պարտավորություն		31,621	-
		<u>1,289,509</u>	<u>635,410</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>7,483,417</u>	<u>7,157,231</u>

Վահե Ղազարյան

Գլխավոր տնօրեն

3 հունիսի 2026թ.



Կրկմիլա Սարգսյան

Գլխավոր հաշվապահ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ		2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	<i>Շնթ.</i>		
Հասույթ	17	2,299,469	1,834,485
Վաճառքի ինքնարժեք	18	(1,478,342)	(1,247,228)
Համախառն շահույթ		821,127	587,257
Այլ եկամուտ	19	32,687	55,143
Հավաքված բերքի իրական արժեք		75,139	44,534
Այգիների մշակման և պահպանման արժեք	20	(148,153)	(173,615)
Իրացման ծախսեր	21	(238,922)	(203,521)
Վարչական ծախսեր	22	(177,795)	(126,158)
Այլ ծախսեր	23	(62,904)	(41,392)
Գործառնական գործունեությունից շահույթ		301,179	142,248
Ֆինանսական ծախսեր, զուտ	24	(180,420)	(109,085)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		183,788	(63,643)
Այլ ոչ գործառնական գործունեությունից օգուտ		44,383	5,044
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		348,930	(25,436)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	25	34,099	(2,262)
Տարվա շահույթ/(վնաս)		383,029	(27,698)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		383,029	(27,698)

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ ճշգրտված մնացորդ	525,050	1,689,413	2,881	2,253,698	4,471,042
Տարվա վնաս	-	-	-	(27,698)	(27,698)
Ներքին տեղաշարժ	-	(89,918)	-	89,918	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(89,918)	-	62,220	(27,698)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	525,050	1,599,495	2,881	2,315,918	4,443,344
Տարվա շահույթ	-	-	-	383,029	383,029
Ներքին տեղաշարժ	-	(68,553)	-	68,553	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(68,553)	-	451,582	383,029
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	525,050	1,530,942	2,881	2,767,500	4,826,373

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված մուտքեր	2,338,640	2,218,192
Այլ մուտքեր	-	2,437
Վճարումներ մատակարարներին	(1,451,651)	(1,224,419)
Վճարումներ աշխատակիցներին	(442,193)	(391,816)
Այլ ելքեր	(22,156)	(7,944)
Վճարված հարկեր և տուրքեր	(176,069)	(259,724)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր, զուտ	<u>246,571</u>	<u>336,726</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տրված փոխառություններ	(500)	(500)
Հիմնական միջոցների ձեռքբերում	(148,396)	(114,218)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	100,000	-
Տրված փոխառությունների մարումից մուտքեր	500	500
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր, զուտ	<u>(48,396)</u>	<u>(114,218)</u>
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկեր և փոխառություններ	244,313	898,222
Ստացված վարկերի և փոխառությունների մարումներ	(389,992)	(1,072,254)
Տոկոսների վճարում	(155)	(25)
Այլ ֆինանսական ակտիվներից մուտքեր	17,767	(15,018)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր, զուտ	<u>(128,067)</u>	<u>(189,075)</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների նվազում, զուտ	<u>70,108</u>	<u>33,433</u>
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	24,377	(7,800)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	39,080	13,447
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	<u>133,565</u>	<u>39,080</u>

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Եվրոթերմ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 1998 թվականի հունիսի 25-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Ընկերության պետական գրանցման համարն է՝ 286.110.03236, վկայականի համարը՝ 01U041738, ՀՎՀՀ՝ 02541434:

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են՝ հյուրերի և սննդամթերքի արտադրությունը, որը ներառում է բնական հյուրերի, նեկտարների, խմիչքների, կոնցենտրատների, ինչպես նաև պահածոյացված մրգերի և բանջարեղենի արտադրությունը, ջեռուցման համակարգերի ներկրումը, կոմպլեկտավորումը և տեղադրումը, ինչպես նաև բեռնափոխադրման ծառայությունների մատուցումը:

Սննդամթերքի ամբողջ արտադրանքն արտադրվում և իրացվում է «Նոյան» ապրանքանիշի ներքո, իսկ ջեռուցման համակարգերի արտադրությունն ու ծառայությունները մատուցվում են «Եվրոթերմ» ապրանքանիշի ներքո:

Ընկերությունն ունի գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողատարածքներ՝ մրգատու այգիներով: Ընկերության այգիներում աճեցվում են ծիրանենի, դեղձենի, խնձորենի, ընկուզենի, նշենի, սպիտակ կեռասենի և խաղողի տեսակներ: Ստացված բերքը հիմնականում օգտագործվում է հյուրերի և սննդամթերքի արտադրության մեջ, իսկ մնացած մասը վաճառվում է երրորդ կողմերին:

Ընկերությունն ունի արտադրատեխնոլոգիական ամբողջական ցիկլ՝ սկսած մրգերի ստացումից և մշակումից մինչև պատրաստի արտադրանքի փաթեթավորում: Ընկերության գյուղատնտեսական նշանակության հողատարածքները գտնվում են Արմավիրի մարզի Վանանդ գյուղում՝ մոտավորապես 193 հա, և Արգինա գյուղում՝ մոտավորապես 359 հա տարածքներով:

Ընկերության արտադրանքը վաճառվում է Հայաստանի Հանրապետությունում և արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և այլ երկրներ:

Ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ընկերության վերահսկող անձը պրն. Էդիկ Ղազարյանն է, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 95.23%-ը: Բաժնետոմսերի մնացած 4.77%-ը պատկանում է սկն. Ռիփսիմե Կաուկչյանին:

Ընկերության կողմից իրականացվող գործունեության առանձին տեսակները ենթակա են լիցենզավորման՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության.

Լիցենզիա N 14918-01՝ շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտներում,

Լիցենզիա N 14918-03՝ շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական ոլորտում,

Լիցենզիա N 14918-04՝ շինարարության իրականացում՝ էներգետիկ ոլորտում,

Լիցենզիա N 14919-01՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտներում,

Լիցենզիա N 14919-03՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ հիդրոտեխնիկական ոլորտում,

Լիցենզիա N 14919-04՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝
էներգետիկ ոլորտում:

Լիցենզիաները տրամադրվել են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության
նախարարության կողմից 2011 թվականի հուլիսի 21-ին: Գործողության ժամկետը՝ անժամկետ:

2025 թվականին Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 178 մարդ (2024
թվականին՝ 178 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ամիրյան
փողոց 15ա:

Ընկերության գործունեության հասցեներն են՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,
Քոչինյան փողոց 5, ինչպես նաև Արմավիրի մարզ, Վանանդ գյուղ:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների
միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական
հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Հաշվետվությունները
պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն
իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Զափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական
արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են
ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով և որոշ հիմնական միջոցների, որոնք
հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ
հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է
ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության
գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ,
դեկլարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական
հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական
տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու
համար դեկլարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ,
գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման
քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների,
եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և վերջիններիս
համար հիմք հանդիսացող ենթադրությունները հիմնված են պատմական փորձի և այլ տարբեր
գործոնների վրա, որոնք ողջամիտ են համարվում՝ ելնելով այդ պահին առկա գիտելիքներից:
Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում, եթե գնահատումները ազդեցություն ունեն միայն այդ ժամանակաշրջանի վրա: Եթե ազդեցությունը վերաբերում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջաններին, ապա վերանայումները ճանաչվում են ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագա ժամանակաշրջաններում:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ստորև.

Պաշարների գուտ իրացվելի արժեքի գնահատում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու անսաթվի դրությամբ դիտարկում է արդյոք պաշարների գուտ իրացվելի արժեքը պակաս չէ դրանց ձեռքբերման արժեքից և նման դեպքերի հայտնաբերման դեպքում պաշարները չափում է դրանց գուտ իրացվելի արժեքով: Գնահատումները հիմնվում են հետհաշվեկշռային ժամանակահատվածի ուսումնասիրության, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ Ընկերության ղեկավարության ակնկալիքների վրա:

Հիմնական միջոցների օգտակարության ժամկետներ

Հիմնական միջոցների օգտակարության ժամկետները հիմնված են ղեկավարության դատողությունների վրա և ապագայում կարող են փոփոխվել (ծան. 3): Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում ընկերության ղեկավարությունը վերլուծում և անհրաժեշտ դեպքում փոփոխում է գնահատականները, կապված հիմնական միջոցների մնացորդային օգտակարության ժամկետների հետ:

Հիմնական միջոցների վերագնահատում

Ընկերությունը որոշ դասերի հիմնական միջոցների նկատմամբ կիրառում է վերագնահատման մոդել: Վերագնահատված ակտիվների արդար արժեքը որոշվում է անկախ գնահատողների կողմից իրականացված գնահատումների հիման վրա՝ օգտագործելով շուկայական տվյալներ և գնահատման ընդունված մեթոդաբանություններ: Գնահատումների փոփոխությունը կարող է էական ազդեցություն ունենալ ակտիվների հաշվեկշռային արժեքների, վերագնահատման պահուստի և հետաձգված հարկային պարտավորությունների վրա:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գնահատումը կատարվում է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան՝ կիրառելով ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: Ղեկավարությունը գնահատում է պարտապանների վճարունակությունը, պարտքերի ժամկետանց լինելը, պատմական կորուստները և ապագա տնտեսական պայմանների հնարավոր ազդեցությունը:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների գնահատում

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում են հաշվեկշռային և հարկային բազաների միջև առաջացած ժամանակավոր տարբերությունների հիման վրա: Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը հիմնված է ապագայում բավարար հարկվող շահույթի առկայության վերաբերյալ ղեկավարության գնահատումների վրա:

Փոխառությունների և ֆինանսական պարտավորությունների գնահատում

Երկարաժամկետ կամ շուկայականից տարբերվող տոկոսադրույքով ստացված փոխառությունների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը գնահատում է դրանց իրական արժեքը և կիրառում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այդ գնահատումները հիմնված են շուկայական տոկոսադրույքների և ֆինանսական գործիքների պայմանների վրա:

Իրական արժեքի չափում

Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներառված որոշ ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

- Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2. Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր
- Մակարդակ 3. Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա):

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2025թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՀՀՄՍ 21	Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հաշվառում

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 9	Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը	1 հունվարի 2026թ.
ՖՀՄՍ 9	Վարձակալությունների գծով պարտավորությունների ապաճանաչում	1 հունվարի 2026թ.
ՖՀՄՍ 18	Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը	1 հունվարի 2027թ.

3. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողաբար կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր տարիների համար և Ընկերության ֆինանսական վիճակի ներկայացման ժամանակ: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է Ընկերության կողմից:

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 449.01 ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 ՀՀ դրամ): Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներում հաշվառվող հոդերն ու շենքերը, ինչպես նաև մեքենաներ և սարքավորումները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ անկախ գնահատողների կողմից այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճն ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝

հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	20-40 տարի
Կառուցվածքներ	10-20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-36 տարի
Արտադրական տնտեսական գույք	1-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	5-15 տարի
Համակարգչային տեխնիկա	1-3 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով և հետագայում ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ներառվում է այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի՝ համակարգչային ծրագրերի համար, 5-10 տարի՝ արտոնագրերի, ապրանքային նշանների և դիզայնի համար, և 10 տարի՝ այլ ոչ նյութական ակտիվների համար:

3.4 Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվը սկզբնական ճանաչման պահին և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն դեպքերի, երբ իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել:

Ընկերության կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանքը չափվում է բերքահավաքի պահին իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված

ծախսումները: Նման չափումը հանդիսանում է սկզբնական արժեք այն ամսաթվի դրությամբ, երբ կիրառվում է ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտը կամ այլ համապատասխան ստանդարտ:

Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի վաճառքի հետ կապված ծախսումները՝ հանած իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև կենսաբանական ակտիվի վաճառքի հետ կապված ծախսումները՝ հանած իրական արժեքի փոփոխությունից, ներառվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որում դրանք առաջացել են:

Բերքատու բույսեր

Բերքատու բույսերն այն կենսաբանական ակտիվներն են, որոնք բացառապես օգտագործվում են որոշակի ժամանակաշրջանների ընթացքում գյուղատնտեսական արտադրանք ստանալու նպատակով: Իրենց արտադրական կյանքի ավարտին դրանք սովորաբար ենթակա են դուրսգրման: Հասունանալուն պես, բացի գյուղատնտեսական արտադրանք տալուց, բերքատու բույսերի կենսաբանական փոխակերպումները այլևս նշանակալի չեն տնտեսական օգուտներ ստեղծելու հարցում և ապագա տնտեսական օգուտների ստացումը բացառապես պայմանավորված է դրանցից ստացվող գյուղատնտեսական արտադրանքով: Հետևաբար, մինչ հասունացումը, դրանք հաշվառվում են որպես սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցներ:

Բերքատու բույսերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները՝ համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, ուղղակիորեն վերագրվող ծախսումները և կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվները հասնում են իրենց արտադրական բերքատվությանը:

Բերքատու ծառերի գնահատված օգտակար ծառայության ժամկետներն հետևյալն են.

Խաղողի որթ	45 տարի
Ծիրանենի	35 տարի
Դեղձենի	20 տարի
Խնձորենի	25 տարի
Ընկուզենի	50 տարի
Բալենի	32 տարի
Նշենի	50 տարի
Սալորենի	25 տարի

3.5 Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով և հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր ծախսումները:

Համանման բնույթ և օգտագործում ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է «առաջին մուտք՝ առաջին ելք» (FIFO) բանաձևը:

3.6 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների:

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզումներ:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրաթեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային

դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով)․

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղչման ազդեցությունն աննշան է, գեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումն այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը՝ դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չարվելու հնարավորությունը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկդում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը, եթե վերջինս էականորեն տարբերվում է սկզբնական արժեքից:

3.8 Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության բաժնեմասերի անվանական արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառում է հողերի և շենքերի, մեքենաների և սարքավորումների վերագնահատումից օգուտներն ու վնասները:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղջելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի ծախսագրումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

3.11 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում են այն դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում տարբերվում է դրա հարկային բազայից:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքերում, երբ հավանական է, որ հասանելի կլինի հարկվող շահույթը, որի դիմաց կարող է օգտագործվել տարբերությունը:

Ակտիվի կամ պարտավորության չափը որոշվում է՝ օգտագործելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են մտել կամ ըստ էության ուժի մեջ են մտնելու հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կիրառվելու են հետաձգված հարկային պարտավորությունները / (ակտիվները) մարելիս / (վերականգնել):

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցվում են, երբ Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցելու իրավաբանորեն կիրառելի իրավունք ունի, իսկ հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են նույն հարկային մարմնի կողմից գանձվող հարկերին:

3.12 Հասույթ

Հասույթը հիմնականում ձևավորվում է բնական հյուսիների, նեկտարների, կոնցենտրատների, պահածոյացված մրգերի և բանջարեղենի վաճառքից, ջեռուցման համակարգերի վաճառքից և տեղադրման ծառայությունների մատուցումից, ինչպես նաև բեռնափոխադրման ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- Բացահայտել կատարման պարտականությունները
- Որոշել գործարքի գինը
- Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունները բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

4. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Փոխանցող հարմարանքներ, մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք, այլ և օգտագործման համար ոչ մատչելի ակտիվներ	Ընդամենը
<u>Սկզբնական/վերագնահատված արժեք</u>			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	2,390,258	5,855,408	9,731,199
Ավելացում	47,409	93,541	327,444
Օտարում	-	-	(178,532)
Ներքին շարժ	176,355	(44,033)	(132,322)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,614,022	5,904,916	9,880,111
Ավելացում	3,850	63,915	102,045
Օտարում	(52,475)	-	(75,154)
Ներքին շարժ	-	(48,248)	48,248
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,565,397	5,920,583	9,907,002
<u>Մաշվածություն</u>			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	710,632	4,181,763	5,462,347
Տարվա հաշվարկ	49,216	104,572	33,298
Օտարման հետևանքով դուրս գրում	-	(46,583)	(1,939)
Ներքին շարժ	-	18,121	(18,121)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759,848	4,257,873	5,600,911
Տարվա հաշվարկ	53,303	82,708	28,092
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	813,151	4,340,581	5,765,014
<u>Հաշվեկշռային արժեք</u>			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,854,174	1,647,043	4,279,200
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,752,246	1,580,002	4,141,988

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովվելու նպատակով Ընկերությունը գրավադրել է իրեն պատկանող հիմնական միջոցներից որոշ հողեր, շենքեր և սարքավորումներ:

Ընկերության հողերը և շենքերը վերջին անգամ վերագնահատվել են անկախ գնահատողների կողմից 2016թ.-ին: Վերագնահատումից առաջացած աճը, հանած համապատասխան

հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերագնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հողերը, շենքերը և սարքավորումները ներկայացված են վերագնահատված արժեքով: Վերագնահատումն իրականացվել է լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից: Շուկայական արժեքը որոշվել է համեմատական և փոխարինման արժեքի (ծախսային) մեթոդների կիրառմամբ:

Ղեկավարության գնահատմամբ՝ հողերի, շենքերի և սարքավորումների իրական արժեքները հաշվետու տարվա ընթացքում էական փոփոխությունների չեն ենթարկվել:

Համեմատական մեթոդի կիրառման դեպքում իրական արժեքը որոշվում է նույն աշխարհագրական դիրքում գտնվող համանման անշարժ գույքի վերաբերյալ ընթացիկ շուկայական գործարքների տվյալների հիման վրա:

Փոխարինման արժեքի մեթոդի կիրառման դեպքում շուկայական արժեքը որոշվում է համանման ակտիվի վերարտադրման կամ փոխարինման համար անհրաժեշտ ծախսերի հիման վրա՝ նվազեցված գնահատման ամսաթվի դրությամբ հաշվարկված ֆիզիկական, ֆունկցիոնալ և տնտեսական մաշվածությամբ:

Եթե Ընկերության հողերը, շենքերը և սարքավորումները հաշվառվեին սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը, ապա դրանց հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր հազար 2,266,152 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,727,690 հազար դրամ):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում հաշվառվում են ամբողջությամբ մաշված, սակայն դեռևս շահագործվող հիմնական միջոցներ՝ 1,170,101 հազար դրամ սկզբնական արժեքով (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,202,792 հազար դրամ):

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Լիցենզիաներ, արտոնագրեր, հեղինակային իրավունքներ	Համակարգ- չային ծրագրեր	Բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադրատոմսեր և փորձանմուշներ	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2024թ. հունվարի 1-ի					
դրությամբ	7,598	7,938	9,766	14,224	39,526
Ավելացում	240	-	-	2,247	2,487
Ներքին շարժ	150	-	-	(150)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի					
դրությամբ	7,988	7,938	9,766	16,321	42,013
Ավելացում	-	-	1,490	3,497	4,987
2025թ. դեկտեմբերի 31-ի					
դրությամբ.	7,988	7,938	11,256	19,818	47,000
<i>Կուտակված ամորտիզացիա</i>					
2024թ. հունվարի 1-ի					
դրությամբ	4,411	7,206	3,588	11,299	26,504
Տարվա հաշվարկ	478	534	552	1,036	2,600
2024թ. դեկտեմբերի 31-ի					
դրությամբ	4,889	7,740	4,140	12,335	29,104
Տարվա հաշվարկ	284	198	562	1,886	2,930
2025թ. դեկտեմբերի 31-ի					
դրությամբ.	5,173	7,938	4,702	14,221	32,034
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2024թ. դեկտեմբերի 31-ի					
դրությամբ	3,099	198	5,626	3,986	12,909
2025թ. դեկտեմբերի 31-ի					
դրությամբ.	2,815	-	6,554	5,597	14,966

6. Բերքատու բույսեր

Հազար ՀՀ դրամ

	Բերքատու ծառեր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	1,050,499	1,050,499
Ավելացում	9,573	9,573
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,060,072	1,060,072
Ավելացում	2,572	2,572
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	1,062,644	1,062,644
<i>Կուտակված մնացորդներ</i>		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	224,540	224,540
Տարվա հաշվարկ	38,902	38,902
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	263,442	263,442
Տարվա հաշվարկ	38,891	38,891
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	302,333	302,333
<i>Հաշվեկշռային արժեք</i>		
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	796,630	796,630
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	760,311	760,311

Այգիներում առկա պտղատու ծառերի քանակական տվյալները ներկայացված են ստորև.

	Տարիքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ.	2024թ.
Դեղձի տնկի	9-13 տարի	10,012	10,012
Ծիրանի տնկի	6-18 տարի	10,712	10,712
Խնձորի տնկի	9-12 տարի	18,650	18,650
Խաղողի որթ	11-15 տարի	55,690	55,690
Սև սալորենի	9-10 տարի	9,050	9,050
Կեռասի տնկի	9-15 տարի	3,750	3,750
Պիստակի տնկի	6 տարի	2,830	2,830
Այլ տնկիներ	0-17 տարի	3,758	3,168
		114,452	113,862

7. Հետաձգված հարկեր

Հազար ՀՀ դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	374,716	385,363
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս ծանոթագրություն 25)	(76,653)	(10,647)
Տարեվերջի մնացորդ	298,063	374,716

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	1 հունվար 2025թ.	Սեփական կապիտալում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբեր 2025թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Աշխատակիցներին փոխհատուցումների գծով Առևտրային դեբիտորական պարտքեր	7,998	-	2,162	10,160
	2,693	-	-	2,693
	<u>10,691</u>	<u>-</u>	<u>2,162</u>	<u>12,853</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Հիմնական միջոցներ	287,911	-	(64,748)	223,163
Բերքատու բույսեր	71,102	-	(3,805)	67,297
Ստացված փոխառություններ	26,394	-	(5,938)	20,456
	<u>385,407</u>	<u>-</u>	<u>(74,491)</u>	<u>310,916</u>
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	<u>(374,716)</u>	<u>-</u>	<u>76,653</u>	<u>(298,063)</u>
Հազար ՀՀ դրամ	1 հունվար 2024թ.	Սեփական կապիտալում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբեր 2024թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Հատուցումներ աշխատակիցներին Առևտրային դեբիտորական պարտքեր	8,122	-	(124)	7,998
	2,512	-	181	2,693
	<u>10,634</u>	<u>-</u>	<u>57</u>	<u>10,691</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>				
Հիմնական միջոցներ	293,569	-	(5,658)	287,911
Բերքատու բույսեր	74,909	-	(3,807)	71,102
Ստացված փոխառություններ	27,519	-	(1,125)	26,394
Հետաձգված հարկային պարտավորություններ	<u>395,997</u>	<u>-</u>	<u>(10,590)</u>	<u>385,407</u>
Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ	<u>(385,363)</u>	<u>-</u>	<u>10,647</u>	<u>(374,716)</u>

8. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	Սարքավորումներ	Ընդամենը
<i>Մկզբնական արժեք</i>		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	66,829	66,829
Ավելացում	4,920	4,920
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	71,749	71,749
Ավելացում	25,750	25,750
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	97,499	97,499
<i>Կուտակված մաշվածություն</i>		
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	13,844	13,844
Տարվա հաշվարկ	9,912	9,912
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,756	23,756
Տարվա հաշվարկ	11,638	11,638
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	35,394	35,394
<i>Հաշվեկշռային արժեք</i>		
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,355	47,993
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	62,105	62,105

9. Պաշարներ

Հազար ՀՀ դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	380,491	320,997
Պատրաստի արտադրանք	940,727	760,731
Ապրանքներ պահեստում	254,657	246,889
	1,575,875	1,328,617

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	752,803	625,032
Այլ դեբիտորական պարտքեր	690	6,142
	753,493	631,174
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	34,869	20,700
Դեբիտորական պարտքեր հարկերի գծով	6,245	927
	41,114	21,627

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

794,607	652,801
---------	---------

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը գնահատելիս հաշվի են առնվում պարտքերի մարման ժամանակացույցում տեղի ունեցած ցանկացած փոփոխություն՝ պարտքերի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

Ընկերության կողմից գնահատված սպասվող պարտքային կորուստները կազմել են 14,962 հազար դրամ: Ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած առևտրային դեբիտորական պարտքերի միջին հավաքագրման ժամկետը գնահատվում է 45 օր: Առևտրային դեբիտորական պարտքերի նկատմամբ տոկոսներ չեն հաշվարկվում:

11. Մնացորդներ բանկերում

Հազար ՀՀ դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	133,565	39,080
	133,565	39,080

12. Բաժնետիրական կապիտալ

Հազար ՀՀ դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սովորական բաժնետոմսեր	525,050	525,050
	525,050	525,050

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմել է 525,050,000 ՀՀ դրամ, որը ներկայացված է 10,501 հատ սովորական բաժնետոմսերով՝ յուրաքանչյուրն անվանական 50,000 ՀՀ դրամ արժեքով: Ընկերության բոլոր բաժնետոմսերը հանդիսանում են սովորական բաժնետոմսեր և տալիս են հավասար իրավունքներ՝ ներառյալ քվեարկության և շահաբաժնի ստացման իրավունքները:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետիրական կապիտալի բաշխվածությունը ըստ բաժնետերերի հետևյալն է.

ՀՀ դրամ

	2025թ. Սովորական բաժնետոմսերի քանակը	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Էդիկ Ղազարյան	10,000	95.23%	500,000,000
Ռիփսիմե Կաուկչյան	501	4.77%	25,050,000
	10,501	100%	525,050,000

13. Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը ձևավորվում է հողի, շենքերի և սարքավորումների վերագնահատման արդյունքում: Վերագնահատված ակտիվների օտարման դեպքում դրանց վերագնահատման պահուստը փոխանցվում է ուղղակիորեն կուտակված շահույթին: Վերագնահատման պահուստը սեփական կապիտալում ներկայացվում է համապատասխան հետաձգված հարկերի ազդեցությունից զուտ:

14. Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապահովված բանկային վարկեր	383,684	297,232	256,285	407,715
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	-	-	763,755	748,903
Թողարկված պարտատուներ	510,891	-	-	504,988
	<u>894,575</u>	<u>297,232</u>	<u>1,020,040</u>	<u>1,661,606</u>

15. Վարձակալություն

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	2,630	1,190
Ոչ ընթացիկ	48,795	42,155
	<u>51,425</u>	<u>43,345</u>

16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	16,239	22,621
Պարտավորություններ աշխատակիցներին	28,741	24,748
Ստացված կանխավճարներ	215,423	226,203
Վճարվելիք հարկեր և պարտադիր վճարներ	44,470	18,980
Զվճարված արձակուրդայինի պահուստ	56,447	44,436
	<u>361,320</u>	<u>336,988</u>

17. Հասույթ

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի վաճառքից հասույթ	2,258,717	1,704,110
Ապրանքների վաճառքից հասույթ	20,392	75,526
Ծառայությունների մատուցումից հասույթ	20,360	54,849
	<u>2,299,469</u>	<u>1,834,485</u>

18. Վաճառքի ինքնարժեք

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	1,449,339	1,149,962
Վաճառված ապրանքների ինքնարժեք	16,489	57,703
Մատուցված ծառայություններից ինքնարժեք	12,514	39,563
	<u>1,478,342</u>	<u>1,247,228</u>

19. Այլ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Այլ պաշարների վաճառքից եկամուտ	22,340	35,923
Գույքագրմամբ հայտնաբերված արժեքներից եկամուտներ	-	206
Ծախսի փոխհատուցումից եկամուտ	20	187
Արտարժույթի փոխանակումից եկամուտներ	8,554	2,440
Այլ	1,773	16,387
	<u>32,687</u>	<u>55,143</u>

20. Այգիների մշակման և պահպանման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	58,286	60,564
Մաշվածության ծախսեր	61,167	79,479
Ոռոգման և ջրի ծախս	10,664	16,432
Նյութածախս	14,119	9,735
Այլ ծախսեր	3,917	7,405
	<u>148,153</u>	<u>173,615</u>

21. Իրացման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	112,346	105,040
Մաշվածության ծախսեր	11,202	15,104
Փաթեթավորման ծախսեր	10,174	3,073
Տրանսպորտի և ապահովագրության ծախսեր	86,659	54,568
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	4,945	14,138
Իրացման այլ ծախսեր	13,596	11,598
	<u>238,922</u>	<u>203,521</u>

22. Վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	109,324	83,368
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	35,201	15,175
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	6,413	3,563
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,584	1,620
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3,380	2,165
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	9,503	6,828
Բանկային ծառայությունների և ապահովագրական ծախսեր	873	1,527
Զփոծհատուցվող հարկերից ծախսեր	8,222	6,123
Վարչական այլ ծախսեր	3,295	5,789
	<u>177,795</u>	<u>126,158</u>

23. Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Այլ պաշարների օտարումից ծախսեր	19,375	25,410
Պաշարների արժեքի փոփոխությունից, վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կորուստներից ծախսեր	2,501	91
Ծախսեր տույժերից և տուգանքներից, դատական ծախսեր	2,084	64
Պաշարների պակասորդներ և փչացումից առաջացած կորուստներ	7,323	5,306
Այլ	31,621	10,521
	<u>62,904</u>	<u>41,392</u>

24. Ֆինանսական ծախս

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկերից և փոխառություններից տոկոսային ծախսեր	105,233	70,875
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	897	966
Թողարկված պարտատուների գծով տոկոսային ծախսեր	74,290	37,244
	<u>180,420</u>	<u>109,085</u>

25. Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկի գծով ծախս	42,554	12,879
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում (ծանոթագրություն ` 7)	(76,653)	(10,617)
	<u>(34,099)</u>	<u>2,262</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2025թ.	Արդյունավետ հարկային տոկոսադրույք (%)	2024թ.	Արդյունավետ հարկային տոկոսադրույք (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ-ների)	<u>348,930</u>		<u>(25,436)</u>	
Շահութահարկ ` 18% դրույքաչափով (2024թ. ` 18%)	62,807	18.00	(4,578)	18.00
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, գուտ	<u>(96,906)</u>	<u>(27.27)</u>	<u>6,840</u>	<u>(26.89)</u>
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	<u>(34,099)</u>	<u>(9.77)</u>	<u>2,262</u>	<u>(8.89)</u>

26. Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	753,637	625,032
Մնացորդներ բանկերում	133,565	39,080
	<u>887,202</u>	<u>664,112</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Վարկեր և փոխառություններ	1,914,615	1,958,838
Վարձակալություն	1,993	42,155
Առևտրային կրեդիտորական պարտքեր	16,239	47,260
	<u>1,932,847</u>	<u>2,048,253</u>

27. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ
- Արտարժույթային ռիսկ

Ղեկավարությունը լիովին պատասխանատու է Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով կնվազեն հաշվետու ամսաթվի դրությամբ առկա ֆինանսական ակտիվներից առաջացած ապագա դրամային հոսքերը: Այս ռիսկն առաջանում է ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և բանկերում պահվող դրամական միջոցներն ու դրանց համարժեքները:

Ընկերությունը որդեգրել է քաղաքականություն՝ ապահովելու, որ ապրանքի ու ծառայությունների վաճառքը կատարվի պատշաճ վարկային պատմություն ունեցող հաճախորդներին, և շարունակաբար վերահսկում է իր դեբիտորական պարտքերի իրավիճակը: Դրամային մնացորդները պահվում են վարկային պորտֆելի բարձր որակ ապահովող ֆինանսական հաստատություններում:

Պարտքային ռիսկի ազդեցությունը

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքով: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ բերված է ստորև.

	<i>(հազար դրամ)</i>	
	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	753,493	625,032
Մնացորդներ բանկերում	133,565	39,080
	<u>887,058</u>	<u>664,112</u>

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական վճարներից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ղեկավարությունն ստանում է 12 ամսվա դրամական միջոցների հոսքերի գծով ամսական կանխատեսումներ, ինչպես նաև մանրամասներ դրամական միջոցների մնացորդների մասին: Համաձայն հաշվետու տարեվերջի դրությամբ կատարված վերոնշյալ կանխատեսումների՝ ֆինանսական տարվա ընթացքում Ընկերությունը կունենա բավարար միջոցներ՝ ակնկալվող ողջամիտ ժամկետներում պարտավորությունները մարելու համար:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամուտների կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն արտարժույթի փոխարժեքների տատանման հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանման ռիսկն է: Ընկերությունը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով չեն համապատասխանում Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթները, որոնցով արտահայտված են Ընկերության գործառնությունները, ակտիվներն ու պարտավորությունները: Արտարժույթի ռիսկը հիմնականում առաջանում է Ընկերության ներգրավված վարկերից, արտերկրյա վաճառքներից և

ձեռքբերումներից, որոնք հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով:

28. Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

29. Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը, մինչև ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: Ընկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալի բոլոր տարրերը (այն է՝ կանոնադրական կապիտալ, կապիտալի այլ հոդված, կուտակված վնաս և վերագնահատման պահուստ), բացի դրամական միջոցների հոսքերի հեջավորման գծով պահուստի գումարներից:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ

- Ընկերությունը կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում (գործունեության անընդհատությունը)՝ բաժնետերերի և այլ շահառուների համար ապահովելով եկամուտներ և հատուցումներ,
- Ընկերությունը կարողանա բաժնետերերի համար ապահովել պատշաճ եկամուտ՝ ապրանքների և ծառայությունների գները սահմանելով ռիսկի մակարդակին

համապատասխան:

Ընկերությունը սահմանում է անհրաժեշտ կապիտալի չափը գնահատված ռիսկերին համապատասխան: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին և ակտիվների ռիսկերի բնույթին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ պարտքը նվազեցնելու նպատակով վաճառել ակտիվները:

Հազար ՀՀ դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանու փոխառություններ, վարկեր, ֆին. վարձակալություն, պարտատոմսեր	1,966,040	2,002,184
Հանած՝ մնացորդներ բանկերում	(133,565)	(39,080)
Զուտ փոխառություններ, վարկեր և ֆին. վարձակալություն	1,832,475	1,963,104
Ընդհանուր սեփական կապիտալ	4,826,373	4,443,344
Առևտրային կրեդիտորական պարտքեր	49,432	47,260
	0.38	0,47

30. Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլ փոխկապակցված կազմարպություններ ինչպես նկարագրված է ստորև.

- Ղազարյան Էդիկ Սմբատի-Հիմնադիր, Նոյան ՍՊԸ՝ /ՌԴ/ Հիմնադիր,
- Ղազարյան Վահե Էդիկի-Գլխավոր տնօրեն, Էկոներկ ՍՊԸ՝ Համահիմնադիր, Ագրինկո ՍՊԸ՝ Հիմնադիր,
- Ղազարյան Մերի Էդիկի-Գործադիր տնօրեն, Նովոտեք ՍՊԸ՝ Հիմնադիր,
- Լյուդմիլա Սարգսյան